ԴԱՄԲԱՆԱԲԼՈՒՐԻ ՊԵՂՈՒՄՆԵՐ ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋԱՆԻ ԲԵՐՔԱԲԵՐ ԳՅՈՒՂՈՒՄ*

1975 թ. սկսվեց Ջողազի ջրամբարի շինարարությունը (ՀՍՍՀ Իշխանի շրջան)։ Շինարարական աշխատանքների ժամանակ բացվել էին տարբեր դարաշրջանների պատկանող մի շարք հնագիտական հուշարձաններ՝ բնակատեղիներ, դամբարանադաշտեր և առանձին դամբարանախմբեր։ Ի հայտ եկած հուշարձանախմբերը հիմնականում տեղադրված էին Ջողազ գետի աջ ափին։ Այստեղ, մոտավորապես 3 կմ երկարությամբ ձգվող հարթ դարավանդի վրա, որը դարեր շարունակ օգտագործվել է որպես վարելահող, եղել են վաղ, միջին, ուշ բրոնզեդարյան, ինչպես և անտիկ, միջնադարյան ու ավելի նոր ժամանակների հուշարձաններ։ XIX դարում նշված դարավանդի վրա՝ Գիլասքու Հող և Կալեր կոչվող տարածքում է տեղադրված եղել նաև Ջողազ (Ներկայումս Բերքաբեր) գյուղը։ Հետաքրքրական է այն փաստը, որ XIX դարի առաջին կեսին այստեղ ցարական կառավարության կողմից կառուցվել է դպրոց, որի կրպատ, սպիտակեցված պատերը բացվել էին ջրամբարի հողաշինարարական աշխատանքների ժամանակ։ Գյուղի և դպրոցի կառուցման մասին ուշագրավ տեղեկություն է տալիս Սարգիս վարդապետ Ջալալյանցը, որը գրում է. «Է գիւղ (Ջողազ) ի վերայ հասարակաց ճանապարհին որ երևի լինել բարեբեր, բայց ծանր է ջուր և օդ տեղւոյն աստ, շինեցավ գեղեցիկ կամուրջ և ուսումնարան արքունի ծախուք ի 1838 ամի»[1]։

Վերոհիշյալ ժամանակաշրջանների հուշարձանների մի զգալի մասը հողաշինարարական աշխատանքների ժամանակ ոչնչացվել է, իսկ մնացած մասը ենթարկվել է մասնակի ավերածություններին։ Նշված հուշարձանների շարքում առանձնակի տեղ է գրավում հատկապես վաղ բրոնզեդարյանը (Կուր-Արաքսյան)։ Հայտնի է բնակատեղիների և նրանց կից դամբարանադաշտերի վայրը։

Պետք է ասել, որ մինչև Ջողազի ջրամբարի շինարարական աշխատանքների սկսելը, Բերքաբերի հուշարձանները հնագիտությանը գրեթե հայտնի չէին, չհաշված այն, որ 1968 թ. այստեղ կատարված հետախուզական պեղումների ժամանակ գյուղի բնակիչ Թելման Մայիլյանի կողմից հնագետ Ս. Ա. Եսայանին է տրվել մ. թ. ա. III հազարամյակի II՝ կեսով թվագրվող մեկ միականթ գավաթ, որը հրատարակվել է Ս. Ա. Եսայանի կողմից[2]։

Բերքաբերում 1981 թ. Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Հայաստանի պատմության պետական թանգարանի կողմից պեղումներ կատարվեցին։ Գյուղից 7—8 հարյուր մետր հյուսիս-արևմուտք՝ ջրամբարի հարավային ափին, պեղվեցին մի շարք դամբարաններ (շուրջ երկու տասնյակ), որոնք հիմնականում հիմնահողային էին, երկուսը՝ քարարկղեր, իսկ մեկը՝ դամբանաբլուր։

Հիմնահողային և քարարկղային թաղումները՝ պատկանում են Կուր-Արաքսյան մշակույթի տարբեր փուլերին, իսկ դամբանաբլուրն իր կառուցվածքային առանձնահատկություններով ու պարունակած նյութերով հարում է Անդրկովկասում առաջին անգամ ի հայտ եկած Վրացական ՍՍՀ-ի Տետրիծղարոյի շրջանի Բեդենիում հայտնաբերվածներին, որոնք հայտնի են «բեդենյան» անվանումով[3]։

---

* Դամբանաբլուրի վերաբերյալ հեղինակի կողմից զեկուցում է կարդացվել ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում կայացած կոնֆերանսում (տե՛ս Երիտասարդ գիտնականների VI կոնֆերանս, զեկուցումների թեզիսներ. Երևան, 1984, էջ 6)։

1 Սարգիս Ջալալյանց. Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան. գիրք Ա, Տրփխիս, 1842, էջ 154։

2 С. А. Есаян. Древняя культура племен северо-восточной Армении (III—I тыс. до н. э.). Ереван, 1976, с. 99, табл. 82, рис. 10.

3 К. Н. Пицхелаури. Археологические исследования в зонах новостроек Норо-Алазанского бассейна. — Археологические исследования на новостройках Грузинской ССР (сб.). Тбилиси, 1982, с. 57.

Վերջին երկու տասնամյակներում բեղենյան տիպին պատկանող մեծ քանակությամբ հուշարձաններ են պեղվել Արևելյան Վրաստանում՝ Իորի և Ալազան գետերի ավազաններում։

Բերքաբերում պեղված դամբանաբլուրն իր կառուցվածքային առանձնահատկություններով և պարունակած նյութերով ավելի սերտ առնչություններ ունի Ալազանի հովտում Շ. Դեդաբրիշվիլու կողմից պեղված դամբանաբլուրների հետ[4]։

Դամբանաբլուրը բացվել էր ջրամբարի շինարարության հետ կապված հողային աշխատանքների ժամանակ։ Մինչև ջրամբարի շինարարական աշխատանքների սկսվելը այս տարածքը օգտագործվել է որպես վարելահող, որի հետևանքով դամբանաբլուրի լիցքը, կամ հողաթումբը, գրեթե հարթեցվել է։ Իսկ ջրամբարի շինարարության ժամանակ այն ամբողջովին հեռացվել էր և դժվար էր որոշել դամբանաբլուրի տրամագիծը։ Դամբանաբլուրը հողի լիցքի տակ ունեցել է նաև գլաքարից լիցք, որի մի մասը ևս հեռացվել էր։ Գլաքարի լիցքի մի մասը, մոտ 25—30 մ տրամագծով, ներկայումս պահպանվում է, որի տակ էլ հավանաբար գտնվում է հիմնական դամբարանախուցը։ Պեղված դամբարանախուցը, որը գտնվում է դամբանաբլուրի պահպանված քարե լիցքից մոտ 10 մ հյուսիս, հիմնականը չէ։

Պեղելուց առաջ դամբարանախցի վրա տեղտեղ երևում էին գլաքարեր, իսկ մակերեսի հիմնական մասը պատված էր հողի բարակ շերտով։ Այն հեռացնելուց հետո պարզվեց, որ դամբարանախուցը լցված է գլաքարերով։ Գլաքարով ամբողջովին լցված է եղել նաև Ալազանի հովտի Շ. Դեդաբրիշվիլու կողմից պեղված III դամբարանաբլուրի դամբարանախուցը, որը, ըստ հնագետի, ունեցել է փայտե ծածկ, քարի լիցքով։ Չնայած փայտի հետքեր չեն հայտնաբերվել այդ դամբարանախցում, բայց այն ամբողջովին լցված է եղել քարով[5]։

Բերքաբերի դամբարանախցի մեջ լցված քարը հանելուց հետո պարզվեց, որ դամբարանը ունեցել է փայտե ծածկ, որի փտելուց հետո նրա վրայի գլաքարի լիցքի մի մասը թափվել է թաղման խուցը, իր տակ ճզմելով նաև խեցեղենը։ Ծածկի փայտի սևացած դաշվածքներ հայտնաբերվեցին դամբարանափոսի հյուսիսային պատի վրա, ինչպես և հատակին։ Ծածկի փայտը, ինչպես և փայտե այլ կոնստրուկցիաներ, միայն դրոշմված ձևով են ներկայանում նաև Ալազանի հովտի I դամբանաբլուրում։ Դամբարանափոսի արևմտյան մասը լցված էր ըստ երևույթին անձրևաջրերի բերած հողով. փուր հավանաբար լցմել է դեռևս այն ժամանակ, երբ դամբարանի ծածկը փտած ու փլված չի եղել։ Դամբարանի համար որպես հատակ ծառայում էր ավազի բնական շերտը։

Դամբարանախուցը քառանկյունաձև էր, ուներ 4 մ երկարություն, 3 մ լայնություն և 1 մ խորություն։ Կողմնորոշումը արևելքից արևմուտք էր։

Ինչպես արդեն վերը նշել ենք, պեղված դամբարանախցում կատարված էր զոհաբերված կենդանու թաղում։ Կենդանու կմախքը տեղադրված էր թաղման խցի միջին մասում։ Կողոսկրերի մի մասը և ծնոտը հայտնաբերվեցին դամբարանի հատակից 50—70 սմ բարձրության վրա՝ դամբարանախուցը թափված քարի լիցքի մեջ։ Այստեղ գտնվեց նաև մարդու մեկ ատամ։ Ըստ երևույթին զոհաբերված կենդանու մի մասը դրված է եղել դամբարանախցի փայտե ծածկի վրա լցված քարի լիցքի վերին մասում, իսկ երբ ծածկը փլվել է, այն լիցքի գլաքարերի հետ միասին հայտնվել է դամբարանախցում։

Դամբարանում թաղված կենդանու կմախքի մոտ հայտնաբերվեց բրոնզե դանակ (նկ. 1), որն ուներ կարճ, նեղ լեզվակաձև պոչ և բավականին լայն, բարակ շեղբ։ Շեղբի երկու կողմերի միջին մասը՝ առանցքը, մի փոքր ուռուցիկ է՝ երկթեք (իրի երկ. 17,8 սմ է, շեղբի լայն. 8 սմ)։ Բացառված չէ, որ այդ դանակով է կատարվել զոհաբերությունը։

Ալազանի հովտի II դամբանաբլուրում հայտնաբերվել է երկու համանման իր[6], որոնցից մեկը գրեթե լրիվ քայքայված է եղել, իսկ մյուսը բաժանված է եղել մի քանի մասերի և վերականգնվել է։

Դամբարանախցում հայտնաբերված խեցեղենը, ինչպես վերը նշվել է, ծածկի փլվելու հետևանքով թաղման խուցը թափված քարերի տակ ճզմվել էր՝ վերածվելով բազմաթիվ մանր ու մեծ բեկորների։ Արտաքին տեսքով ամբողջական էր մնացել միայն մեկ երկկոնիկ միականթ գավաթ, որն ըստ երևույթին նախօրոք, մինչև ծածկի փլվելը, գտնվելիս է եղել անձրևա-

4 Ш. Ш. Дедабришвили. Курганы Алазанской долины. — Труды Кахетской археологической экспедиции. Т. II, Тбилиси. 1979 (см. курганы I, II, III).

5 Նույն տեղում, էջ 51։

6 Տե՛ս նույն տեղում, էջ 43 (II—23), աղ. XIV—3 և աղ. XXIX—2։ Հեղինակը այս իրերը ներկայացնում է որպես стержень (шпонка) (էջ 40)։ Այս տիպի առարկաներ մեծ քանակությամբ հայտնաբերվել են նաև Բեղենիի դամբանաբլուրներում, ամրացված են եղել սայլերի սռնակների վրա։ Տե՛ս գ. გობეჯიშვილი ბედენის გორასამარხების კულტურა. თბ., 1981.

չրերի հետևանքով դամբարանախուցը թափված հողի բերվածքի տակ և չի շարդվել։

Դամբարանախցում, կապված թաղման ծեսի հետ, տեղադրված են եղել 10 կավանոթներ։ Խեցեղեն դասավորված է եղել թաղված կենդանու երկու կողմերում։

Դամբարանախցի հյուսիսային և հարավային պատերի տակ կային երկու մեծ կճուճների բաղ-



Նկ. 1

մաթիվ բեկորներ (կճուճները մասնակիորեն վերականգնված են, աղ I, 1)։ Այս կճուճներն իրենց չափերով և արտաքին տեսքով իրար նման են, ունեն ուռուցիկ, բավականին լայն իրան, սև գույնի են, փայլեցված։ Այս երկու կավանոթների իրանի վերին մասերում կան երկուական աղեղնաձև կանթեր։ Նման տիպի երկկանթանի կավանոթները լայն տարածում ունեն Բեդենիի և Ալազանի հովտի համապատասխան մշակույթի մեջ։ Բերքարերից պեղված կճուճներն արտաքին տեսքով և չափերով ավելի մոտ են Ալազանի հովտի Դեգաբրիշվիլու պեղած I դամբանարլուրի № 21 և 40 կավանոթներին[7]։ Երկկանթանի և միականթ կճուճներ հայտնաբերվել են նաև III դամբանաբլուրում[8]։ Ընդհանրապես ուսի վրա երկու և մեկ աղեղնաձև կանթերով կավանոթները հատկանշական են «բեդենյան» համարվող մշակույթին և լայն տարածում ունեն։

Դամբարանախցում վերը նկարագրված երկու կավանոթների միջև գտնվեց չափերով բավականին փոքր, կարմիր գույնի մեկ այլ կավանոթ, որը գրեթե ամբողջովին քայքայված վիճակում էր։

Խեցեղենի մնացած մասը, որ չափերով ավելի փոքր է, քան նկարագրված երկու կճուճները, տեղադրված էր կմախքի արևմտյան կողմում՝ գրեթե մեկ գծի վրա։ Այս շարքում կային երեք կճուճներ, որոնց բեկորները գտնվում էին շարքի միջին մասում և պարզ է, որ նախօրոք դրված են եղել իրար մոտ։ Կճուճներից առաջինը (աղ. I, 2) ունի ընդգծված, կլորավուն իրան, բավականին կարճ վիզ, դուրս թեքված սրվող շուրթ։ Կավանոթը ներսից դեղնավուն է, իսկ արտաքինից ներկված է կարմիր գույնի ներկով, որը հիմնականում թափված է։ Այս կավանոթը անկանթ է, ունի բարակ խեցի և պատրաստված է դեղնավուն գույնի մաքուր կավից։ Արտաքին տեսքով նմանվում է Բամուտի (Հյուսիսային Կովկաս) դամբարանադաշտում պեղված մայկոպյան մշակույթի ուշ շրջանին պատկանող թաղումներից հայտնաբերված կարմիր օխրայագույն կավանոթներին[9]։

Երկրորդ կճուճը (աղ. I, 3) ունի կլորավուն իրան, լայն բերան և հարթ հատակ, վիզը կարճ է, իսկ կանթերը շրթադիր ուղղահայաց են։ Կավանոթը պատրաստված է ցածրորակ, վատ հունցված մանր ավազախառն կավից։ Իր արտաքին տեսքով այս կավանոթը նման է Ալազանի հովտի I դամբանաբլուրում հայտնաբերված երկկանթանի լայնաբերան կճուճին[10]։

---

[7] Ш. Ш. Дедабришвили. Указ. соч., с. 29, 32, табл. XXII, 21, 40.

[8] Նույն տեղում, աղ. LV—LX։

[9] Р. М. Мунчаев. Кавказ на заре бронзового века. М., 1975, рис. 66.

[10] Ш. Ш. Дедабришвили. Указ. соч., табл. XXX (տե՛ս կճուճը).



Աղ. 1



Աղ. 11

Երրորդ կճուճը (աղ. I, 4) ունի կլորավուն իրան, հարթ հատակ, կարճ, դեպի վեր նեղացող վիզ և դուրս թեքված սրվող շուրթ։ Վրան կա մեկ կանթ, որը սկսվում է վզի միջին մասից և շարունակվում է մինչև իրանի վերին մասը։ Կավանոթը արտաքինից շագանակագույն է, բավականին փայլուն մակերեսով։ Նման տիպի միականթ, լավ փայլեցված մակերեսով կավանոթներ հայտնաբերվել են նաև Բեդենիի դամբանաբլուրներում[11]։

Կմախքի արևմտյան կողմում հայտնաբերվեցին նաև չորս սև գույնի գավաթներ։ Առաջինը (աղ. II, 1) ունի ուռուցիկ իրան և հարթ հատակ։ Իրանի վերին մասում, շուրթի տակ, կան երկու ռելիեֆ գծեր։ Այս կավանոթի կանթը շրթադիր ուղղահայաց է, աղեղնաձև, կտրվածքում կլոր։ Կանթի հակառակ կողմում կա մեկ կլոր փոսիկ։ Երկրորդ գավաթը (աղ. II, 2) թեյնիկաձև է, ունի կարճ, նեղ անցքով ծորակ, որը կանթի հետ կազմում է 90° անկյուն։ Կավանոթի իրանի վերին մասով, շուրթից ցած, անցնում են երեք ակոսագծեր, որոնք կանթի մոտ թեքվում են ցած՝ օղակելով այն։ Թեյնիկաձև կավանոթ, բայց ոչ անմիջապես նման տիպի, հայտնաբերվել է նաև Ալազանի հովտի II դամբանաբլուրից[12]։ Այնպես որ Բերքարբերի դամբանաբլուրից գտնըված թեյնիկաձև անոթը նորություն չէ այս մշակույթի համար։ Երրորդ և չորրորդ գավաթները (աղ. II, 3, 4) երկկոնիկ են, ունեն հարթ հատակ և իրանի վերին կեսում՝ աղեղնաձև կանթեր, որոնք կտրվածքում կլոր են։ Այս կավանոթներն իրենց չափերով տարբեր են, ունեն դուրս չեշտված ուղիղ շուրթեր։ Գավաթներն իրենց կանթերի հակառակ կողմերում փոսիկազարդ են։ Երկկոնիկ, փոսիկազարդ, իրանի վերին կեսում աղեղնաձև կանթով, դուրս չեշտված ուղիղ շուրթով գավաթներ հայտնաբերվել են նաև Ալազանի հովտի I և II դամբանաբլուրներում[13], Բեդենիում և ընդհանրապես յուրահատուկ են այդ մշակույթին։ Ինչպես վերը տեսանք, Բերքարբերում բացված դամբանաբլուրի դամբարանախցում հայտնաբերված նյութերը հիմնականում իրենց զուգահեռներն ունեն Ալազանի հովտի I և II դամբանաբլուրների նյութերում[14]։ Այս դամբանաբլուրները Դեդաբրիշվիլու կողմից թվագրվում են մ. թ. ա. XXIII—XXI դդ.[15]։

Բեդենիի դամբանաբլուրները Գ. Գոբեջիշվիլու կողմից թվագրվում են մ. թ. ա. III հազարամյակի վերջով—II հազարամյակի սկզբով[16]։ Քանի որ Բերքարբերի դամբանաբլուրից հայտնաբերված նյութերի մի մասը իր զուգահեռներն ունի ավելի վաղ թվագրվող Ալազանի հովտի, իսկ մի մասն էլ մի փոքր ավելի ուշ թվագրվող Բեդենիի դամբանաբլուրների և Թամուտի ուշ մայկոպյան մշակույթի նյութերում, ապա, մեր կարծիքով, Բերքարբերի դամբանաբլուրը պետք է թվագրել մ. թ. ա. XXI—XX դդ.։

Ինչպես տեսանք, Բերքարբերում պեղված դամբանաբլուրն իր կառուցվածքային առանձնահատկություններով և պարունակած նյութերով առանձնանում է Կուր-արաքսյան մշակույթից և պատկանում է մի նոր մշակույթի, որը հնագիտությանը հայտնի է դարձել վերջերս։ Հայկական ՍՍՀ հյուսիս-արևելյան շրջանում այս նոր մշակույթին (որը, ամենայն հավանականությամբ, Անդրկովկասում հայտնվել է մ. թ. ա. III հազարամյակի կեսերից և հարատևել է նաև մ. թ. ա. II հազարամյակի առաջին քառորդում) պատկանող հուշարձանի հայտնաբերումը ինքնին հետաքրքիր երևույթ է։ Ուշագրավ է նաև այն փաստը, որ վերջին տարիներին այս մշակույթին պատկանող նյութեր հայտնաբերվել են նաև Ադրբեջանի հարավ-արևմուտքում[17]։

Եթե այս նոր մշակույթի ընդգրկման սահմանները մինչև վերջին տարիները համապատասխան էին համարվում Վրաստանի հարավ-արևելյան և արևելյան շրջաններին, իրենց մեջ ներառնելով հատկապես Խրամ, Իորի և Ալազան գետերի ավազանները, ապա այժմ պարզվում է, որ այդ մշակույթի տարածման սահմանները բավականին լայն են և ներառնում են նաև Ադրբեջանի հարավ-արևմտյան և Հայաստանի հյուսիս-արևելյան շրջանները։ Այս նոր մշակույթի մանրակրկիտ ուսումնասիրումը կարող է պարզություն մտցնել Կուր-արաքսյան վաղ բրոնզեդարյան մշակույթի հետ կապված որոշ առեղծվածների մեջ։

Ս. Ե. ԳԱՍՊԱՐՅԱՆ

---

[11] გ. გობეჯიშვილი, დაშრომი ტაბ. XXX 2, 3.

[12] Ш. Ш. Дедабришвили. Указ. соч., табл. XXVII, 43.

[13] Նույն տեղում, աղ. XXVI և XLVIII։

[14] Այս դամբանաբլուրները Շ. Դեդաբրիշվիլին համարում է արքայական (տե՛ս նշվ. աշխ., էջ 59)։ Այս երկուսից հատկանշական է հատկապես II-ը, որտեղից հայտնաբերվել են մեծ քանակությամբ ոսկյա առարկաներ, որոնց մեջ առավել աչքի է ընկնում առյուծի ոսկեձույլ արձանիկը (աղ. LXII)։

[15] Նույն տեղում, էջ 25։

[16] გ. გობეჯიშვილი, დასახ. ნაშრომი, გვ 136.

[17] Այս մասին տե՛ս К. Н. Пицхелаури. Указ. соч., с. 57.